ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1509-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2022.09.19-2022.10.02 Պաշտոնական հրապարակման օրը 29.09.2022	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	29.09.2022
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	29.09.2022
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	30.09.2022	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԿԱՐԳ ՍՏԱՑԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 1745-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2022 թվականի N 1509-Ն

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԿԱՐԳ ՍՏԱՑԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 1745-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 12.2-րդ և 14-րդ կետերը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության, տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհման, ինչպես նաև ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1745-Ն որոշման՝

1) վերնագրում «, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների» բառերը փոխարինել «հանձնաժողովի» բառով.

2) 1-ին կետի 1-ի ենթակետում «, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների» բառերը փոխարինել «հանձնաժողովի» բառով.

3) ուժը կորցրած ճանաչել 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը.

4) N 1 հավելվածի՝

ա. վերնագրում և 1-ին կետում «, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների» բառերը փոխարինել «հանձնաժողովի» բառով,

բ. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովը (այսուհետ՝ ատեստավորման հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հանրակրթության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք), սույն կարգով և հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգերով:»,

գ. ուժը կորցրած ճանաչել 4-րդ կետը,

դ. 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ գլուխների վերնագրերում և 5-րդ, 7-9-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ, 18-րդ և 20-27-րդ կետերում «և հանրապետական հանձնաժողովների» բառերը փոխարինել «հանձնաժողովի» բառով,

ե. 6-րդ կետից հանել «, հանրապետական հանձնաժողովը՝ 7 անդամից» բառերը,

զ. 10-րդ կետից հանել «, իսկ հանրապետական հանձնաժողովը ձևավորվում է նախարարի հրամանով» բառերը,

է. 15-րդ կետից հանել «, իսկ հանրապետական հանձնաժողովը՝ նախարարի յոթ» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

Երևան

29.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1509-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՏԱՐԱԿԱՐԳ ՍՏԱՑԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) ուսուցչի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) ձևավորման և գործունեության, տարակարգ ստացած ուսուցիչներին հավելավճար տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Ուսուցիչն իր նախաձեռնությամբ է մասնակցում տարակարգի շնորհմանը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին (այսուհետ՝ նախարար) ուղղված իր դիմումի հետ միասին ներկայացնելով սույն կարգով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

2. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

3. Հանրապետական հանձնաժողովը երեք տարի ժամկետով և հասարակական հիմունքներով գործող մարմին է, որի անհատական կազմը հաստատվում է նախարարի համապատասխան հրամանով:

4. Հանրապետական հանձնաժողովը ձևավորվում է 11 անդամներից՝ հետևյալ կազմով՝

1) հանձնաժողովի նախագահ, որն ի պաշտոնե նախարարի՝ հանրակրթության ոլորտը համակարգող տեղակալն է.

2) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից (այսուհետ՝

նախարարություն)՝ 2 անդամ.

3) «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամից (այսուհետ՝ ԿԶՆԱԿ հիմնադրամ)՝ 2 անդամ.

4) «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» (ԿՏԱԿ) ՊՈԱԿ-ից՝ 2 անդամ.

5) Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնից (ՀՄԿ)՝ 2 անդամ.

6) Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից (այսուհետ՝ ՀՊՄՀ)՝ 2 անդամ:

5. Հանրապետական հանձնաժողովն ունի քարտուղար, որն ի պաշտոնե նախարարության հանրակրթության վարչության՝ տարակարգի գործընթացը համակարգող մասնագետն է և նիստերին մասնակցում է առանց քվեարկելու իրավունքի:

6. Հանրապետական հանձնաժողովի որոշմամբ հանրապետական հանձնաժողովի աշխատանքներում կարող են ընդգրկվել փորձագետներ՝ սույն կարգով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի բովանդակային համապատասխանության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն տրամադրելու համար:

7. Հանրապետական հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

8. Հանրապետական հանձնաժողովի գործունեության նպատակը տարակարգի շնորհման գործընթացի իրականացումը և օրենքի 26-րդ հոդվածի 21-րդ մասով սահմանված որոշումների կայացումն է:

9. Հանրապետական հանձնաժողովին ուղղված հայտերի ընդունումը և դրանց ամբողջականության ապահովումը կազմակերպում է նախարարության համապատասխան ստորաբաժանումը:

10. Հանրապետական հանձնաժողովի որոշումները ենթակա են բողոքարկման՝ համաձայն օրենքի 26-րդ հոդվածի 22-րդ մասի:

3. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

11. Հանրապետական հանձնաժողովի լիազորությունները սահմանվում են օրենքով և սույն կարգով:

12. Հանրապետական հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի (անհնարինության դեպքում՝ նաև հեռավար) միջոցով:

13. Հանրապետական հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում տարին առնվազն 4 անգամ՝ կախված դիմումների քանակից:

14. Հանրապետական հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում: Նիստի ոչ իրավազոր լինելու դեպքում հաջորդ նիստը տեղի է ունենում ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

15. Հանրապետական հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներով:

16. Հանրապետական հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.

2) վարում է հանձնաժողովի նիստերը.

3) իրականացնում է սույն կարգով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

17. Հանրապետական հանձնաժողովի քարտուղարը՝

1) արձանագրում է հանձնաժողովի նիստերը.

2) իրականացնում է սույն կարգով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

18. Հանրապետական հանձնաժողովի անդամը՝

1) կարող է վարել նիստը հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.

2) ուսումնասիրում է փաստաթղթերի փաթեթը.

3) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.

4) մասնակցում է յուրաքանչյուր ուսուցչի համար անցկացվող քվեարկություններին.

5) ստորագրում է տարակարգի շնորհման մասին հանրապետական հանձնաժողովի կայացրած որոշման վերաբերյալ արձանագրությունը, իսկ որոշման հետ համաձայն չլինելու դեպքում կարող է չստորագրել՝ ներկայացնելով գրավոր հիմնավորում.

6) ծանոթանում է նիստերի արձանագրություններին.

7) իրականացնում է սույն կարգով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

19. Հանձնաժողովի նախագահը սույն կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանրապետական հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի համաձայնությամբ կարող է դիմել նախարարին՝ հանձնաժողովի անդամին հանձնաժողովից հեռացնելու միջնորդությամբ, եթե այդ անդամը՝

1) երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայել է նիստերից.

2) երեք անգամ հրաժարվել է մասնակցել քվեարկությանը:

Հանձնաժողովի անդամի թափուր տեղը համալրվում է սույն կարգի դրույթներին համապատասխան՝ թափուր տեղ առաջանալու օրվանից ոչ ուշ, քան տասը օրվա ընթացքում:

4. ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

20. Փաստաթղթերը ներկայացվում են նախարարություն՝ էլեկտրոնային (տեսաներածված) տարբերակով:

21. Տարակարգի համար ուսուցիչը ներկայացնում է դիմում՝ ուղղված նախարարին, անձը հաստատող փաստաթղթի պատճենը, սույն կարգի 22-24-րդ կետերով սահմանված համապատասխան աստիճանի տարակարգի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք համապատասխանում են ուսուցչի՝ տվյալ աստիճանի տարակարգի շնորհման մասնագիտական չափանիշներին:

22. Առաջին և երկրորդ աստիճանի տարակարգ՝

1) Առարկայական գիտելիքների զարգացում՝ դասավանդած առարկայի ոլորտում մասնագիտական բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ դիպլոմ, կամ տվյալ առարկայի ոլորտում մասնագիտական բարձրագույն կրթության բացակայության դեպքում՝ բարձրագույն կրթության փաստաթուղթ՝ դիպլոմ, և դասավանդվող առարկայից վերջին հինգ տարվա ընթացքում կամավոր ատեստավորման արդյունքում առնվազն 60 % արդյունքի հավաստում.

2) Դասընթացների և դասերի պլանավորում՝ դիմող ուսուցչի կողմից տվյալ ուսումնական տարում դասավանդվող առարկայի (առարկաների) տարեկան թեմատիկ պլանը (պլանները), ինչպես նաև տարակարգի համար դիմելու նախորդ ամսվա ընթացքում կազմած բոլոր դասերի պլանները՝ իր դասավանդած բոլոր դասարանների համար.

3) Դասի վարում՝ տարակարգի համար դիմելու նախորդ վեց ամսվա ընթացքում իր մոտ կատարված դասալսումների բոլոր արձանագրությունները, դիդակտիկական տարբեր նպատակներով իրականացված երկու դասի առնվազն 10 րոպե տևողությամբ տեսագրություն (այս և ստորև ներկայացված կետերով պահանջվող դասի տեսագրությունները կարող են լինել նույնը, եթե դրանցում արտացոլված են մասնագիտական չափանիշների ցանկում ներառված համապատասխան բոլոր բաղադրիչները կամ տարբեր, եթե այդ բաղադրիչներն ամբողջությամբ ներկայացված չեն այդ տեսագրություններում).

4) Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ինտեգրում՝ ՏՀՏ-ի հմտությունների մասին վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում ՏՀՏ բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, էլեկտրոնային գործիքների կիրառմամբ իրականացված երկու դասի առնվազն 10 րոպե տևողությամբ տեսագրություն.

5) 21-րդ դարի հմտությունների խթանում՝ 21-րդ դարի հմտությունների մասին վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում 21-րդ դարի հմտությունների մասին բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, 21-րդ դարի հմտությունների զարգացման նպատակով իրականացված երկու դասի առնվազն 10 րոպե տևողությամբ տեսագրություն.

6) Ռեսուրսների կառավարում՝ ռեսուրսների կառավարման հմտությունների մասին վկայող իրականացված երկու դասի առնվազն 10 րոպե տևողությամբ տեսագրություն.

7) Սովորողների կարիքների ճանաչում՝ հարցաթերթիկների միջոցով սովորողների և ծնողների կողմից ուսուցչի անանուն գնահատման արդյունքները.

8) Ուսումնառության գնահատում՝ ուսումնառության գնահատման մեթոդաբանությունն իմանալու և կիրառել կարողանալու մասին վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում գնահատման բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, տվյալ առարկայի՝ ուսուցչի դասավանդած դասարաններում գնահատման համապատասխանության մասին հաստատության կողմից իրականացված մշտադիտարկման (էլեկտրոնային մատյանի լրացման, թեմատիկ գրավոր աշխատանքների տարբերակների համապատասխանության, ուսումնական նախագծերի՝ տվյալ թեմային համապատասխանության, սովորողի բնութագրերի մասին) արդյունքները, դիմող ուսուցչի կողմից կազմված թեմատիկ գրավոր աշխատանքների, ուսումնական նախագծերի, սովորողի բնութագրերի առնվազն երկուական նմուշներ.

9) Ուսումնական գործընթացի ներառականությունն ու մասնակցայնությունն ապահովող կարողություններ՝ ներկայացվում է միայն դիմող ուսուցչի դասավանդած դասարանում (դասարաններում) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների առկայության դեպքում. մշակված անհատական ուսուցման պլանի ներկայացում, ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսումնառության արդյունավետության մասին վկայող փաստեր՝ ԿԱՊԿ գնահատման արդյունքի փոփոխություն, առաջադիմության արդյունքների փոփոխություններ:

23. Երրորդ աստիճանի տարակարգ՝

1) Առարկայական գիտելիքների զարգացում՝ բարձրագույն կրթության փաստաթուղթ՝ դիպլոմ և դասավանդվող առարկայից վերջին հինգ տարվա ընթացքում կամավոր ատեստավորման արդյունքում առնվազն 70 % արդյունքի հավաստում.

2) Դասընթացների և դասերի պլանավորում՝ դիմող ուսուցչի կողմից տվյալ ուսումնական տարում դասավանդվող առարկայի (առարկաների) տարեկան թեմատիկ պլանը (պլանները), ինչպես նաև տարակարգի համար դիմելու նախորդ ամսվա ընթացքում կազմած բոլոր դասերի պլանները՝ իր դասավանդած բոլոր դասարանների համար.

3) Դասի վարում՝ տարակարգի համար դիմելու նախորդ վեց ամսվա ընթացքում իր մոտ կատարված դասալսումների բոլոր արձանագրությունները, դիդակտիկական տարբեր նպատակներով իրականացված երկու դասի առնվազն 10 րոպե տևողությամբ տեսագրություն (այս և ստորև ներկայացված կետերով պահանջվող դասի տեսագրությունները կարող են լինել նույնը, եթե դրանցում արտացոլված են մասնագիտական չափանիշների ցանկում ներառված համապատասխան բոլոր բաղադրիչները կամ տարբեր, եթե այդ բաղադրիչներն ամբողջությամբ ներկայացված չեն այդ

տեսագրություններում).

4) Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ինտեգրում՝ ՏՀՏ-ի հմտությունների մասին վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում ՏՀՏ բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, էլեկտրոնային գործիքների կիրառմամբ իրականացված երկու դասի առնվազն 10 րոպե տևողությամբ տեսագրություն.

5) 21-րդ դարի հմտությունների խթանում՝ 21-րդ դարի հմտությունների մասին վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում 21-րդ դարի հմտությունների մասին բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, 21-րդ դարի հմտությունների զարգացման նպատակով իրականացված երկու դասի առնվազն 10 րոպե տևողությամբ տեսագրություն.

6) Ռեսուրսների կառավարում՝ ռեսուրսների կառավարման հմտությունների մասին վկայող իրականացված երկու դասի համապատասխան հատվածների տեսագրություն.

7) Սովորողների կարիքների ճանաչում՝ հարցաթերթիկների միջոցով սովորողների և ծնողների կողմից ուսուցչի անանուն գնահատման արդյունքները.

8) Ուսումնառության գնահատում՝ ուսումնառության գնահատման մեթոդաբանությունն իմանալու և կիրառել կարողանալու մասին վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում գնահատման բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, տվյալ առարկայի՝ ուսուցչի դասավանդած դասարաններում գնահատման համապատասխանության մասին հաստատության կողմից իրականացված մշտադիտարկման (էլեկտրոնային մատյանի լրացման, թեմատիկ գրավոր աշխատանքների տարբերակների համապատասխանության, ուսումնական նախագծերի՝ տվյալ թեմային համապատասխանության, սովորողի բնութագրերի մասին) արդյունքները, դիմող ուսուցչի կողմից կազմված թեմատիկ գրավոր աշխատանքների, ուսումնական նախագծերի, սովորողի բնութագրերի առնվազն երկուական նմուշներ.

9) Ուսումնական գործընթացի ներառականությունն ու մասնակցայնությունն ապահովող կարողություններ՝ ներկայացվում է միայն դիմող ուսուցչի դասավանդած դասարանում (դասարաններում) ԿԱՊԿ ունեցող սովորողների առկայության դեպքում. մշակված անհատական ուսուցման պլանի ներկայացում, ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսումնառության արդյունավետության մասին վկայող փաստեր՝ ԿԱՊԿ գնահատման արդյունքի փոփոխություն, առաջադիմության արդյունքների փոփոխություններ.

10) Մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում՝

ա. մասնագիտական զարգացման ուղղությամբ վերապատրաստումների վկայականներ և մասնագիտական զարգացման շրջանակներում համաժողովներին մասնակցությունը վկայող տեղեկանք,

բ. տեղական (նախարարության Բարձրագույն որակավորման կոմիտեի, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների) կամ օտարերկրյա պետության կամ միջազգային գիտական կամ մանկավարժական պարբերականներում կամ խմբագրական կազմ ունեցող տեղական կամ միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում գիտական կամ մանկավարժական հոդված (հեղինակ կամ համահեղինակ),

գ. նախարարության ենթակայության կառույցների կողմից տրված՝ ուսուցչի վերապատրաստողի վկայական և իրականացրած վերապատրաստումների մասին տեղեկանք,

դ. գիտական աստիճանը հավաստող փաստաթուղթ.

11) Մասնագիտական բարեվարքություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝ մասնագիտական համայնքների, ուսուցիչների՝ մասնագիտական հիմունքներով ձևավորված կազմակերպությունների, արհմիությունների աշխատանքներին մասնակցության մասին տեղեկատվություն, այդ կազմակերպություններից, պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված շնորհակալագրեր, պատվոգրեր, այլ պարգևներ («Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենք).

12) Կրթության ոլորտի օրենսդրության և պրակտիկայի իմացություն՝ կրթության ոլորտի օրենսդրության և պրակտիկայի իմացությունը հավաստող վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում կրթության ոլորտի օրենսդրության բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, օրենքների, կարգերի և ուղեցույցների մշակմանը մասնակցության մասին տեղեկանք՝ առկայության դեպքում, գրավոր կարծիք կամ առաջարկություններ հանրակրթության ոլորտը կարգավորող առնվազն մեկ իրավական ակտի վերաբերյալ:

24. Չորրորդ աստիճանի տարակարգ՝

1) Առարկայական գիտելիքների զարգացում՝ բարձրագույն կրթության փաստաթուղթ՝ դիպլոմ և դասավանդվող առարկայից վերջին հինգ տարվա ընթացքում կամավոր ատեստավորման արդյունքում առնվազն 80 % արդյունքի հավաստում.

2) Դասընթացների և դասերի պլանավորում՝ դիմող ուսուցչի կողմից տվյալ ուսումնական տարում դասավանդվող առարկայի (առարկաների) տարեկան թեմատիկ պլանը (պլանները), ինչպես նաև տարակարգի համար դիմելու նախորդ ամսվա ընթացքում կազմած բոլոր դասերի պլանները՝ իր դասավանդած բոլոր դասարանների համար.

3) Դասի վարում՝ տարակարգի համար դիմելու նախորդ վեց ամսվա ընթացքում իր մոտ կատարված դասալսումների բոլոր արձանագրությունները, դիդակտիկական տարբեր նպատակներով իրականացված երկու դասի առնվազն 10 րոպե տևողությամբ տեսագրություն (այս և ստորև ներկայացված կետերով պահանջվող դասի տեսագրությունները կարող են լինել նույնը, եթե դրանցում արտացոլված են մասնագիտական չափանիշների ցանկում ներառված համապատասխան

բոլոր բաղադրիչները կամ տարբեր, եթե այդ բաղադրիչներն ամբողջությամբ ներկայացված չեն այդ տեսագրություններում).

4) Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ինտեգրում՝ ՏՀՏ-ի հմտությունների մասին վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում ՏՀՏ բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, էլեկտրոնային գործիքների կիրառմամբ իրականացված երկու դասի առնվազն 10 բոպե տևողությամբ տեսագրություն.

5) 21-րդ դարի հմտությունների խթանում՝ 21-րդ դարի հմտությունների մասին վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում 21-րդ դարի հմտությունների մասին բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, 21-րդ դարի հմտությունների զարգացման նպատակով իրականացված երկու դասի առնվազն 10 բոպե տևողությամբ տեսագրություն.

6) Ռեսուրսների կառավարում՝ ռեսուրսների կառավարման հմտությունների մասին վկայող իրականացված երկու դասի համապատասխան հատվածների տեսագրություն.

7) Սովորողների կարիքների ճանաչում՝ հարցաթերթիկների միջոցով սովորողների և ծնողների կողմից ուսուցչի անանուն գնահատման արդյունքները.

8) Ուսումնառության գնահատում՝ ուսումնառության գնահատման մեթոդաբանությունն իմանալու և կիրառել կարողանալու մասին վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում գնահատման բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, տվյալ առարկայի՝ ուսուցչի դասավանդած դասարաններում գնահատման համապատասխանության մասին հաստատության կողմից իրականացված մշտադիտարկման (էլեկտրոնային մատյանի լրացման, թեմատիկ գրավոր աշխատանքների տարբերակների համապատասխանության, ուսումնական նախագծերի՝ տվյալ թեմային համապատասխանության, սովորողի բնութագրերի մասին) արդյունքները, դիմող ուսուցչի կողմից կազմված թեմատիկ գրավոր աշխատանքների, ուսումնական նախագծերի, սովորողի բնութագրերի առնվազն երկուական նմուշներ.

9) Ուսումնական գործընթացի ներառականությունն ու մասնակցայնությունն ապահովող կարողություններ՝ ներկայացվում է միայն դիմող ուսուցչի դասավանդած դասարանում (դասարաններում) ԿԱՊԿ ունեցող սովորողների առկայության դեպքում. մշակված անհատական ուսուցման պլանի ներկայացում, ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսումնառության արդյունավետության մասին վկայող փաստեր՝ ԿԱՊԿ գնահատման արդյունքի փոփոխություն, առաջադիմության արդյունքների փոփոխություններ.

10) Մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում՝

ա. մասնագիտական զարգացման ուղղությամբ վերապատրաստումների վկայականներ և մասնագիտական զարգացման շրջանակներում համաժողովներին մասնակցությունը վկայող տեղեկանք,

բ. տեղական (նախարարության Բարձրագույն որակավորման կոմիտեի, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների) կամ օտարերկրյա պետության կամ միջազգային գիտական կամ մանկավարժական պարբերականներում կամ խմբագրական կազմ ունեցող տեղական կամ միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում գիտական կամ մանկավարժական հոդված (հեղինակ կամ համահեղինակ),

գ. նախարարության ենթակայության կառույցների կողմից տրված՝ ուսուցչի վերապատրաստողի վկայական և իրականացրած վերապատրաստումների մասին տեղեկանք,

դ. գիտական աստիճանը հավաստող փաստաթուղթ.

11) Մասնագիտական բարեվարքություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝ մասնագիտական համայնքների, ուսուցիչների՝ մասնագիտական հիմունքներով ձևավորված կազմակերպությունների, արհմիությունների աշխատանքներին մասնակցության մասին տեղեկատվություն, այդ կազմակերպություններից, պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված շնորհակալագրեր, պատվոգրեր, այլ պարգևներ («Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենք).

12) Կրթության ոլորտի օրենսդրության և պրակտիկայի իմացություն՝ կրթության ոլորտի օրենսդրության և պրակտիկայի իմացությունը հավաստող վերապատրաստման վկայական կամ պարտադիր վերապատրաստման շրջանակներում կրթության ոլորտի օրենսդրության բաղադրիչի կրեդիտը հավաստող վկայական, օրենքների, կարգերի և ուղեցույցների մշակմանը մասնակցության մասին տեղեկանք՝ առկայության դեպքում, գրավոր կարծիք կամ առաջարկություններ հանրակրթության ոլորտը կարգավորող առնվազն մեկ իրավական ակտի վերաբերյալ:

5. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

25. Հաստատության ուսուցչին տարակարգի շնորհման մասին որոշումն ընդունվում է նախարարի հրամանով ձևավորված հանրապետական հանձնաժողովի կողմից՝ հիմք ընդունելով ուսուցչի մասնագիտական չափանիշները:

26. Հանրապետական հանձնաժողովն ընդունում է օրենքի 26-րդ հոդվածի 21-րդ մասով սահմանված որոշումներից մեկը:

27. Հանրապետական հանձնաժողովի՝ ուսուցչին համապատասխան տարակարգի շնորհման մասին որոշումը հիմք է ուսուցչին համապատասխան տարակարգ շնորհելու մասին նախարարի հրամանի համար:

28. Հաստատության ուսուցչին շնորհվող տարակարգը քառաստիճան է, և շնորհելիս աստիճանակարգություն չի

պահանջում:

29. Հաստատության ուսուցչին՝

1) առաջին աստիճանի տարակարգ շնորհվում է սույն կարգի 22-րդ կետի 1-ին ենթակետով և 2-9-րդ ենթակետերով սահմանված պահանջների միջին հաշվարկով առնվազն 70 %-ն ապահովելու դեպքում, որոնք համապատասխանում են Ավագ ուսուցչի մասնագիտական չափանիշներին.

2) երկրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է սույն կարգի 22-րդ կետի 1-ին ենթակետով և 2-9-րդ ենթակետերով սահմանված պահանջների միջին հաշվարկով առնվազն 80 %-ն ապահովելու դեպքում, որոնք համապատասխանում են Հմուտ ուսուցչի մասնագիտական չափանիշներին.

3) երրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է սույն կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետով և 2-12-րդ ենթակետերով սահմանված պահանջների միջին հաշվարկով առնվազն 70 %-ն ապահովելու դեպքում, որոնք համապատասխանում են Վերապատրաստող ուսուցչի մասնագիտական չափանիշներին.

4) չորրորդ աստիճանի տարակարգ շնորհվում է սույն կարգի 24-րդ կետի 1-ին ենթակետով և 2-12-րդ ենթակետերով սահմանված պահանջների միջին հաշվարկով առնվազն 80 %-ն ապահովելու դեպքում, որոնք համապատասխանում են Հետազոտող ուսուցչի մասնագիտական չափանիշներին:

30. Հանրապետական հանձնաժողովի որոշումները նախարարություն բողոքարկվելու դեպքում նախարարի հրամանով ձևավորվում է երեք հոգուց բաղկացած բողոքարկման հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ներկայացուցիչներ նախարարությունից, ԿԶՆԱԿ հիմնադրամից և ՀՊՄՀ-ից: Բողոքարկման հանձնաժողովի կազմում չեն կարող ներգրավվել տվյալ որոշումն ընդունած հանձնաժողովի անդամները:

31. Բողոքարկման հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, կազմում հանրապետական հանձնաժողովի որոշումներն անփոփոխ թողնելու կամ վերանայելու վերաբերյալ համապատասխան եզրակացություն և ներկայացնում նախարարին:

32. Նախարարն ընդունում է համապատասխան որոշում՝ հիմք ընդունելով բողոքարկման հանձնաժողովի եզրակացությունը:

33. Հաստատության ուսուցչին տարակարգ տրվում է 5 տարի ժամկետով:

34. Տարակարգի գործողությունը վաղաժամկետ դադարեցվում է այն դեպքում, երբ՝

1) ուսուցիչն ազատվում է աշխատանքից.

2) ուսուցիչը զրկվում է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) հերթական ատեստավորման արդյունքում ուսուցիչը չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին.

4) տարակարգ ստանալու համար ուսուցչի կողմից ներկայացվել են ոչ հավաստի տեղեկություններ:

35. Տարակարգը պահպանվում է, եթե՝

1) տարակարգի հնգամյա ժամկետի ընթացքում ուսուցիչը տեղափոխվում է հաստատությունից այլ հաստատություն.

2) ուսուցիչը տարակարգի հնգամյա ժամկետի ընթացքում աշխատանքից ազատվելուց հետո նորից անցնում է ուսուցչական աշխատանքի որևէ հաստատությունում: Այս դեպքում տարակարգը պահպանվում է հնգամյա ժամկետի մնացած ժամանակահատվածի համար:

6. ՏԱՐԱԿԱՐԳ ՍՏԱՑԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

36. Տարակարգ ստացած ուսուցչին ուսումնական հաստատությանն այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին տրվում է հավելավճար՝

1) առաջին աստիճանի տարակարգի համար՝ ուսուցչի աշխատավարձի 10 %-ի չափով.

2) երկրորդ աստիճանի տարակարգի համար՝ ուսուցչի աշխատավարձի 20 %-ի չափով.

3) երրորդ աստիճանի տարակարգի համար՝ ուսուցչի աշխատավարձի 30 %-ի չափով.

4) չորրորդ աստիճանի տարակարգի համար՝ ուսուցչի աշխատավարձի 50 %-ի չափով:

37. Տարակարգ ստացած ուսուցչի հասանելիք հավելավճարը տրվում է յուրաքանչյուր ամիս՝ աշխատավարձի հետ միասին:

38. Հանրակրթական ծրագիր իրականացնող այլ հաստատությունում համատեղությամբ աշխատող տարակարգ ստացած ուսուցչին հավելավճարը տրամադրվում է միայն հիմնական աշխատավայրում:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Հարությունյան

29.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 29 սեպտեմբերի 2022 թվական: